

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և հարաբերությունների շրջանակը

Սույն օրենքը կարգավորում է պետական ծառայողների պետական կենսաթոշակային ապահովության կազմակերպմանը և ֆինանսավորմանն առնչվող հարաբերությունները, սահմանում է պետական ծառայողների՝

- 1) կենսաթոշակային ապահովության իրավական երաշխիքները.
- 2) կենսաթոշակին տրվող ամենամսյա հավելում (այսուհետ՝ ամենամսյա հավելում) ստանալու իրավունք ձեռք բերելու պայմանները.
- 3) ամենամսյա հավելման չափը, նշանակելու, վճարելու պայմաններն ու կարգը:

Հոդված 2. Պետական ծառայողները

1. Սույն օրենքի իմաստով պետական ծառայողներ են և սույն օրենքով սահմանված պայմանների բավարարման դեպքում ամենամսյա հավելում ստանալու իրավունք ունեն.

1) քաղաքացիական ծառայության, քաղաքացիական հատուկ ծառայության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության, դատախազության աշխատակազմում պետական ծառայության, դատական ծառայության, հարկային ծառայության, մաքսային ծառայության, դիվանագիտական ծառայության մեջ գտնվող անձինք.

2) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը և անդամները, Մարդու իրավունքների պաշտպանը.

3) դատավորները, դատախազները.

4) քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձինք:

2. Սույն օրենքի իմաստով քաղաքական պաշտոններ են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության նախարարների պաշտոնները:

3. Սույն օրենքի իմաստով հայեցողական պաշտոններ են Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարի, Հայաստանի Հանրապետության վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների, Հայաստանի Հանրապետության նախարարների տեղակալների, Հայաստանի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների, Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանների, միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչների, Հայաստանի Հանրապետության մարզպետների և նրանց տեղակալների ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալների, Հայաստանի Հանրապետության վարչապետի,

Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնները:

4. Սույն օրենքի իմաստով՝ քաղաքացիական պաշտոններ են Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների) ղեկավարների (նրանց տեղակալների) և անդամների պաշտոնները:

Հոդված 3. Պետական ծառայողների կենսաթոշակային ապահովության իրավական կարգավորումը

Պետական ծառայողների կենսաթոշակային ապահովության հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական այլ ակտերով:

Հոդված 4. Պետական ծառայողի կենսաթոշակային ապահովությունը

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված անձանց կենսաթոշակ է նշանակվում «Պետական կենսաթոշակների մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

2. Սույն օրենքով սահմանված պայմանների առկայության դեպքում «Պետական կենսաթոշակների մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նշանակված կենսաթոշակին տրվում է ամենամսյա հավելում:

Հոդված 5. Ամենամսյա հավելման ֆինանսավորման աղբյուրը

Ամենամսյա հավելումը վճարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից:

Հոդված 6. Ամենամսյա հավելում տալու պայմանները

Ամենամսյա հավելում տրվում է, եթե անձը՝

1) ունի օրենքով սահմանված տարիքային կենսաթոշակի իրավունք և առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 15 տարին սույն օրենքով սահմանված պետական ծառայության ստաժ է, կամ

2) ունի օրենքով սահմանված տարիքային կենսաթոշակի իրավունք և առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 7 տարին սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված քաղաքական պաշտոն զբաղեցնելու ժամանակահատված է, կամ

3) պետական ծառայության ժամանակահատվածում ճանաչվել է աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ և ունի առնվազն 5 տարվա՝ սույն օրենքով սահմանված պետական ծառայության ստաժ:

Հոդված 7. Ամենամսյա հավելում ստանալու իրավունքը սահմանափակելը

1. Պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձը ամենամսյա հավելում չի ստանում:

2. Անձը զրկվում է ամենամսյա հավելում ստանալու իրավունքից, եթե պետական ծառայողի պաշտոնից ազատվել է պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից դատական ակտով զրկվելու պատճառով: Անձը ամենամսյա հավելում ստանալու

իրավունք վերստին ձեռք է բերում, եթե նրա դատվածությունը սահմանված կարգով մարվել կամ հանվել է:

Հոդված 8. Ամենամսյա հավելում ստանալու իրավունք տվող պետական ծառայության ստաժը

1. Ամենամսյա հավելում ստանալու իրավունք տվող պետական ծառայության ստաժում հաշվառվում է սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պետական ծառայողների պետական ծառայության ժամանակահատվածները, ինչպես նաև մինչև համապատասխան մարմիններում պետական ծառայությունը կարգավորող օրենքներն ընդունվելը Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր, դատական համապատասխան մարմիններում և դատախազությունում աշխատած ժամանակաշրջանները:

2. Ամենամսյա հավելում ստանալու իրավունք տվող պետական ծառայության ստաժում չի հաշվառվում համապատասխան օրենքներով սահմանված կարգի խախտմամբ պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը, եթե անձը պետական ծառայության տվյալ պաշտոնից ազատվել է այդ հիմքով:

3. Պետական ծառայության ստաժը հաշվարկելու առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 9. Ամենամսյա հավելումը հաշվարկելու կարգը

1. Ամենամսյա հավելումը հաշվարկվում է անձի զբաղեցրած պետական ծառայության վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի և օրենքով նախատեսված հավելավճարի ընդհանուր գումարի 75 տոկոսը կազմող գումարի և նշանակված պետական կենսաթոշակի (ներառյալ՝ կուտակային կենսաթոշակը) տարբերության չափով:

2. Աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն 4 օրացուցային տարի սույն օրենքով սահմանված պետական ծառայության ավելի բարձր դրույքաչափ ունեցող պետական ծառայության պաշտոն (պաշտոններ) զբաղեցրած լինելու դեպքում՝ ամենամսյա հավելումը հաշվարկելիս հիմք են ընդունվում այդ պաշտոնի (պաշտոններից որևէ մեկի) համար սահմանված պաշտոնային դրույքաչափը և օրենքով նախատեսված հավելավճարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 10. Ամենամսյա հավելում նշանակելը, վերահաշվարկելը և վճարելը

1. Ամենամսյա հավելումը անձի գրավոր դիմումի հիման վրա հաշվարկում, նշանակում և վճարում է կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի այն ստորաբաժանումը (այսուհետ՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում), որտեղ գտնվում է անձի կենսաթոշակի գործը:

2. Ամենամսյա հավելումը նշանակվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Ամենամսյա հավելումը, առանց կենսաթոշակառուի գրավոր դիմումի, վերահաշվարկվում է պաշտոնային դրույքաչափը, հավելավճարը կամ կենսաթոշակի չափը փոխվելու դեպքում:

4. Ամենամսյա հավելումը յուրաքանչյուր ամիս վճարվում է կենսաթոշակի հետ՝ ընդհանուր գումարով:

5. Ամենամսյա հավելումը հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու, վճարելու կարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 11. Ամենամսյա հավելում նշանակելու ժամկետը

Ամենամսյա հավելումը նշանակվում է դրա համար դիմելու օրվանից:

Հոդված 12. Ամենամսյա հավելում վճարելը դադարեցնելը և վերսկսելը

Ամենամսյա հավելումը վճարելը դադարեցվում և վերսկսվում է «Պետական կենսաաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 13. Օրենքն ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 14. Դատավորի պաշտոնում աշխատած անձանց կենսաաթոշակի իրավունքը

1. Դատավորի (այդ թվում՝ նախկին գերագույն դատարանի անդամ դատավորի, նախկին պետական արբիտրաժի պետական արբիտրի կամ նախկին ժողովրդական դատավորի) պաշտոնում աշխատած անձի՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաաթոշակը և հավելավճարը վերահաշվարկվում են սույն օրենքով: Եթե վերահաշվարկված կենսաաթոշակի և ամենամսյա հավելման ընդհանուր գումարը փոքր է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաաթոշակի և հավելավճարի ընդհանուր գումարից, ապա վճարումը կատարվում է նախկին չափով:

2. Այն դատավորը, ում պաշտոնավարման 10 տարին լրացել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կամ կլրանա սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում, և նա այդ պաշտոնից կազատվի պաշտոնավարման տարիքը լրանալու (65 տարեկան դառնալու) կամ ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան չորս ամիս անընդմեջ աշխատանքի չներկայանալու, կամ մեկ օրացուցային տարվա ընթացքում ավելի քան 6 ամիս իր պաշտոնեական պարտականությունները կատարելու ի վիճակի չլինելու, կամ նշանակելուց հետո դատավորի պաշտոնում նշանակելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու պատճառով, ամենամսյա հավելում ստանալու իրավունք ունի սույն օրենքով:

Հոդված 15. Դատախազի, դատախազության քննիչի պաշտոնում աշխատած անձանց կենսաաթոշակի իրավունքը

1. Դատախազի կամ դատախազության քննիչի պաշտոնում աշխատած անձի՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաաթոշակը, սույն օրենքի պայմանները բավարարելու և նրա գրավոր դիմելու դեպքում, դադարեցվում է և նրան կենսաաթոշակ ու ամենամսյա հավելում է նշանակվում սույն օրենքով սահմանված կարգով:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատախազի կամ դատախազության քննիչի պաշտոնում աշխատած անձին նշանակված կենսաաթոշակը վերահաշվարկվում և վճարվում է զինվորական կենսաաթոշակ նշանակելու և վճարելու պայմաններով ու կարգով:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում, երկարամյա ծառայության զինվորական կենսաաթոշակի իրավունք ձեռք բերած՝ դատախազի կամ դատախազության քննիչի պաշտոնում աշխատած անձին, իր ընտրությամբ, կարող է նշանակվել զինվորական կենսաաթոշակ կամ նրա կենսաաթոշակային ապահովությունն իրականացվել սույն օրենքով սահմանված կարգով: